Ցանապատէն Սուր ցԷՔԷԼԵՓԻՆ,
Ծփայր բազմերամ կարաւանն անհուն,
Ո՛չ թիւ գայր մարդկան, ո՛չ հօտից խաշանց,
Ո՛չ համար ջոկոց գրբաստուց, եզանց,
Հանգոյն մրկանանց հեղեղիչ տարեր,
Ընդուլ ծածանին ի շարժ և յերեր,
Նմանեալ ուղղիցս հոսանաց գալնան,
Ո՛չ որոշի՝ թէ ո՞յք գան, ո՞յք գաոնան.
Զի որք զընեն զոտս ծագ յանապատին,
Ճանաչին և ելթ՝ թէ ընդ ծով անցին,
Իսկ որք տակաւին կան ի տաշտ ծովուն,
Զոր ցամաքեցոյց շունչ հարաւ հողմոյն,
Երևէր՝ թէ կան անշարժ ի հունին,
Ըստ քայլ քայլ թուեն զչափ ծանծաղին,
Սակայն՝ ոչ այդպէս. այլ արագ ճեպեն,
Ճողոպրել զանձինս յանզերծ վրտանգէն.
Զի գայր Փարաւոն վնց հարիւր կառք,
Վառեալ բիւրաւոր հեծելազօրք,
Ընդէ՞ր այս փախուստ, հետապնդութիւն,
Առ ի՞նչ ահ, երկիւղ, անսանձ բարկութիւն.
Մթեմ՞ նոր ինչ է. զի յԵգիպտոսէ,
Ազգաց և աղանց գաղթական խուսէ,

(Մ՚ՈՒՅԵՆ Ի ՅԵՓԻՅՈՒ)

ԱՆԻ.

Ի ցօղածաւալ պահուն արեգին,
Մինչ երգէր սոխակ զվարդ նազելին,
Նազելին և իմ՝ չքնաղ Հայաստան,
Տխուր աւերջք գայր ինձ յերևան,
Զի՞արդ ժուժայր սիրտ Հայկազեան ճետիս,
Ցուրախութեան կալ ի տեսարանիս.
Ուստի ծեծելով զիմ՝ կուրծ ցաւագին,
Զու անկեալ հասի յԱնի լալագին,
Զայն հոչակելի թագուհին Անի,
Խորին լուութեամբ պատեալ, ո՛հ, տեսի.
Վեհ Բագրատունեան Աթոռն և պալատ,
Ցերկիր խորտակեալ՝ համակ մամուռապատ,
Անդ հաղար և մի խորանք վեհավայր՝
Համակ հիասքանչ նկարուք շինեալ,
Ցոգունք ընդ հողով ողջ թաղեալ կային,
Այլք կիսականգուն կացեալ տխրագին,
Բայց առաւել խոր կարեվէր ի սիրտ
Աղեխարշ եղէ ընդ գործս Քամեանց բիրտ,
Որք վեհշէն զորմունս սուրբ Եկեղեցեաց,
Քակեալ՝ կրէին ի շինութիւնս տանց,
Արի՛ մի՛ ողբար զաւակ Հայկազեան՝
Ի տես այսոցիկ կրրից վատութեան.
Մինչև ցե՞րբ ենջիս, Ազգ իմ՝ սիրական,
Զի՞ք ի քեզ եռանդ, վեհ ՈԳԻ Հայկեան.
Տես, ո՛չ սոսկ Անին երբեմն մարդաշատ,
Այլ և Արմաւիր, Դուին, Արտաշատ,
Համայն անտերունչ զոհեալ հրնութեանց,
Ոչ ևս են պարծանքք մերոց Հայրենեաց.
Ի Նոսին բունեն Ազուէս, Նապաստակ,
Ի բեմն Խորանաց տածեն զիւրեանց ձագ,
Ցորս, ո՛հ, էր երբեմն՝ Պատարագ Քրիստոս,
Պաշտէր փառաւոր ի ձայնս օրհներգուս,
Գալարին աղիքս ի յուշս անցելոց,
Թորին արտասուք ի կականս ողբոց,
Եւ ի տես սոցա ուխտեցի ուխտ սուրբ,
Սիրել զՄիութիւն սիրոյն վեհապանծ,
Որ ըզսխրալիս կանգնեացն Միութիւն,
Նախանձ չարն շրջեաց ճիւաղաց ի բուն,
Ուստի ո՛վ Ազգ իմ, սիրեա՛ զՄիութիւն,
Որով ըզնախկին գտցես ճոխութիւն.

Ո-ԲԱԲԱՆԷՆ ՄԷՐՊԷՆ ՀԱՀՈՎԱՆԵԱՆՑ.

Ա Զ Գ Ա Ց Ի Ն

ՎԱՍԵՄ. ՄԵԼՔՈՆ ԽԱՆ

Ի Ս. ԷՋՄԻԱՆԻՆ.

Բարեկարգիչն Պարսկաստանի (Նազիմ—իւլ—Միւլք) Վասեմափայլ Մելքոն Խան՝ որ լինազօր դեսպանութեամբ կ'գնայ Եւրոպա, և ի Պարսկաստանէ հասեալ Երևան, ի յաջորդ աւուրն ի 26 ն ամսոյս եկաւ ի Մայր Աթոռս Հայաստանեայց ի Ս. Էջմիածին՝ յուխտ և յերկրպագութիւն Սրբազան Վայրիս և մեծափառ Սրբութեանց՝ ևս յայցելութիւն Վեհ. Հայրապետի Ազգիս.

Նորին Վսեմափայլութիւնն արժանի մեծարանօք ընդունուեցաւ, և ընդ Վեհ. Կաթողիկոսի վայելեց ի պատիւ Իւր պատրաստեալ ճաշը, որում սեղանակից գտնուեցան Գեր. Արքեպիսկոպոսունք, Եպիսկոպոսունք և քաղաքական պաշտօնակալք ոմանք։

Զնայելով միջոցի կարի կարճ լինելոյն՝ մեծաւանձկանօք այցելեց Մայր Աթոռոյս Թանգարանին, Նորաշէն պահարանաց մէջ ցարդ զետեղեալ երևելի և պատուական հնութեանց և նուիրական Սրբութեանց, և Նորակառոյց հոյակապ ճեմարանի, և յանչափս ուրախացաւ և մխիթարեցաւ հոգեպէս, և ընդ երեկս մեկնեցաւ աստի երթալ Յերևան։

Վսեմ. Մելքոն Խան՝ մեծ փառք է մեր Ս. Եկեղեցւոյ, պարծանք և մխիթարութիւն համայն հայրենեացս։ Ըստ որում Նորին Վսեմափայլութիւնն քաջ գիտաց իւր երևելի հանճարով՝ բարեհամբաւոյր վարուք՝ լուսաւոր գաղափարներով և մեծարգիւն գործունէութեամբք այլ ազանց և Պետութեանց սիրելի և մեծարելի ընծայել զանձն՝ գրաւելով բազմաց համակրութիւնը։ Եւ ահա իւր հաւատարիմ և անձնանուէր ծառայութեամբ այսօր առաջին նախարարներէն մին կ'հանդիսանայ Պարսից կառավարութեան մէջ, և այնքան սիրելի Օգոստ. Շահին՝ որ հաճեցաւ տալ Նորին Վսեմափայլութեան Մելքոն խանին էրէրէ կամ Պէռռ-Ռէռ բարէ-բէրէ տիտղոսը և պաշտօնը, —որում արդարև ըստ ամենայնի արժանաւոր է,—և դեռ սակաւ ժամանակ է՝ որ Իւր ձեռաք նուիրեց անդամանդեայ թագաւորական Պատկերը կախել ի պարանոցն՝ ինչան իւր գոհունակութեան և սիրոյն որ առ նա։

Թող հրճուին Պարսկաստանարնակ մեր սիրելի ազգայինք, որ ունին իւրեանց մէջ մի այնպիսի պատուական Ազգակից՝ որ գիտէ սիրել իւր Ազգը և Առաքելական սուրբ Եկեղեցին։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն)։

Ի ՇԱՄԱԽԻ։

	Ռ.	Կ.
Աբրահամ Լալայեանց	10	
Մովսէս Ներսիսեանց	15	
Ստեփան Քարամեանց	5	
Մարտիրոս Նիազեանց	3	
Բաղդասար Նաղարեանց	3	
Մովսէս Աշուղեանց	3	
Կարապետ Տէր Ստեփանեանց . . .	3	
Միքայէլ Պօղոսեան Բակլարեանց . .	3	
Առաքել Յովսէփեան Օսմանցեանց .	4	
Մարտիրոս Միրզաբէկեանց	4	
Յովհաննէս Քալանթարեանց . . .	5	
Գէորգ Տէր Յովհաննէսեան	2	
Յովհաննէս Խլարեանց	3	
Սարգիս Պօղոսեանց	3	
Անյայտ ոմն	2	
Հայրապետ Բաղիրեանց	2	
Եազօր Բաղիրեանց	2	
Դաւիթ Եսայեան	3	
Յակոբ Մկրտչեան	3	
Միքայէլ ըէկ Ավշարեան	2	
Միքայէլ Ղարաղաշեանց	3	
Մովսէս Ռուստամեան	2	
Բախիլ Տէր Իսրայէլեան	1	
Յակոբ Սարգսեանց	1	

ԲԱԴՈՒ.

Գէներալ Լէյտենանտ Լազարեան .	50	
Պօղոս Արզումեանց	5	
Ջաւատ Մելիքեանց	3	
Յակոբ Անդրէասեանց	3	
Միսայէլ Շահակոնանեանց . . .	10	
Անյայտ ոմն	2	
Անդրանիկ Պողոսեանց	1	
Գրիգոր Այվազեանց	3	
Լուդվիկ Սարգսեան	5	
Երեցփոխ Թադէոս Մելիքեանց . .	3	